

## ՊԱՐԲԵՐՈՒԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«**ԵՎԾԹՆԻԿ ԵՎՐՈՊԻ**», ապ-  
րիլ—«ԹԻՒՐՔԻ եւ ՄԱԿԵԴՈՆԻԱ».  
—Թիւրքիայի անկմանը նպաստով պատ-  
ճառների մէջ, ասում է յօդուածի հե-  
ղինակ Խնարովը, Կայ մէկը, որ առաջինն  
ու հիմնական է: Դա կրօնական—մահմե-  
դական ոգին է, որը արտայատում է  
բոլոր հիմնարկութիւնների մէջ, որը ազ-  
գել է ամբողջ ժողովրդի աշխարհա-  
հայեցողութեան վրայ... Թիւրքի և  
քրիստոնեաների մէջ զոյսւթիւն ունի  
ոչ թէ այն բնական անդունքը, որ սո-  
վորաբար բաժանում է յաղթողներին  
հպատակներից, այլ աւելի խոր ան-  
դունդ, որ առաջ է եկել կուլտուրաների  
տարրերութիւնից: Կրօնական ոգու ազ-  
գեցութեան տակ թիւրք ցեղը շի առա-  
ջագիմում, շի զարդանում, իսկ քրիս-  
տոնեաները ընդհակառակը ձգտում  
են դէպի նոր տնտեսական, քաղաքա-  
կան և քաղաքացիական ձեւեր: Թիւրք  
կառավարութեան բարենորոգչական իւ-  
րաքանչիւր նոր քայլը մի նոր ննարա-  
ւորութիւն է տալիս քրիստոնեայ տար-  
ըին՝ գերակշռող գեր խաղալու Թիւր-  
քիայի հասարակական - տնտեսական  
կենքում: Ահա հէնց այդ պատճառով  
էլ լինքնապաշտպանութեան հասարակ  
ընապէի ազգեցութեան տակ թիւրք  
ցեղը գիմագրում է բարենորոգչամնե-  
րին: Դրեւ ապացոյց կարող է ծառա-  
յել Թիւրքիայի ամբողջ պատճութիւնը  
անցեալ զարաշքանում...

Թիւրքիայի քաղաքական կեանքի  
գլխաւոր գործօններն են աստիճա-  
նական կամաց առաջարկութիւնները:

որները, զինուորականները և հոգեորա-  
կանները: Աստիճանաւորներն ու զի-  
նուորականները կենտրոնական իշխա-  
նութեան կամ աւելի ճիշան ասած՝ սուլ-  
թանի կամքի գործիքներն են: Իսկ հո-  
գեորականութիւնը միշտ ունեցել է և  
այժմ էլդեռ ունի մեծ ինքնուրացնութիւն:  
Նա ոչ միայն քաղաքական, այլև տնտե-  
սական գործօն է, որովհետեւ իր ձեռ-  
քում ունի անզին քանակութեամբ հո-  
գեր—«վակուֆ»... Այսպէս թէ այնպէս  
այդ երեք գործօններն էլ՝ թիւրքիա-  
տիմն, զինուորականութիւնն ու ուզու-  
րականութիւնը հէնց իրանց դասակար-  
գային շահերի տեսակէալց ստիգուած  
են դիմագրել բարենորոգումներին...

Թիւրքիայի իշխաղ զասակարգերին  
են պատկանում և թիւրք հօղատէշերը:  
Ել քաղաքներում քրիստոնեաների  
ձեռքումն է հարստութիւմը, զիւղերում  
ընդհակառակը՝ թիւրքերն են տնտե-  
սապէս գերակշռողը: Այսպէս օրինակ  
Մակեդոնիայի գերթէ բարոր հողերը  
թիւրք չշիֆեկշիներին» են պատկա-  
նում... Հէնց այդ պատճառով զրանք  
էլ պէտք է աշխատեն պահպանել տի-  
րող կարգերը, որովհետեւ այցպէս է  
ձեռնուու:

Բայց այդ տիրող գասակարգերն  
ինչպէս են կարողանում իրանց կողմը  
պահել թիւրք ամբոխին—բուն ժո-  
ղովրդին: Իսկապէս թիւրքերն էլ նոյն-  
քան տանջում են կառավարութեան  
ներկայ բժիշկի տակ, որքան և քրիս-  
տոնեաները: Նրանք էլ զմարում են

ծանր հարկեր, ենթարկում են «չիփ-լիշտների» անսահման շահագործմանը: Ճիշտ է՝ նրանք որոշ շափով ազատ են իշխանաւորների կամայականութիւնից, ազատ են կրօնակից ու ցեղակից աւագակների յարձակումներից, բայց դրա փոխարքն կրում են զինուրական ծառայութեան ամբողջ ծանրութիւնը: Այդ բոլորից յետոյ թիւրքերի համար առիրապետող ցեղը լինելը կատարեալ ցընորք կը գտանար, եթէ կառավարութիւնը միշտ նրանց կրդմը չը պահէր քիւստնեաների հետ ընդհարում ունեցած ժամանակ, եթէ նա թիւրքերին ժամանակ առ ժամանակ կողմնակի կերպով հնարաւորութիւնը ունեցուածքից օգտուելու...»

Ինչպէս որ միջնն գարերում խաչակիւների արշաւանքների ժամանակաշրջանում կրօնական գալաֆարի տակ ծածկուած էր քաղցած գիւղացիների և ասպետների ախորդակը, որ ձգաւում էր արևելերից հարուստ տարս ստանալու, այդպէս էլ այժմ թիւրքական մոլեսանդութեան տակ թագնուած են աւելի բէալ պատճառներ:

Վեց տարի առաջ Կ. Պոլում տեղի ունեցած սարսափելի կոստրածի ժամանակ բռնըն, որ հայ ժողովրդի տուած զոհերը գլխաւորապէս բռնակիւներ էին, որոնք աշխատում էին Կ. Պոլսի նաւահնանգստում: Այդ իրողութիւնը հասկանալի կը գաւնայ, եթէ ուշագլութեան առնենք այն հանգստմանը, որ Կ. Պոլսի փողոցները լի էին թիւրք թափառաշըներով: Դրանք գաղթել էին Յուլիուսից ու Ռումինիայից և եկել մայրաքաղաքում արքուստ որոնելու: Բայց այստեղ հանդիպեցին ուժեղ մըրցակիցների: Հայ բանուրոները—բռնակիւներն էին այդ մըրցակիցները: Այդպիսով առաջացել էր մի անտազոնիզմ հայ և թիւրք տարրի մէջ, իսկ կառավարութիւնը այդ անտեսական անտագոնիզմ ծառայեցընել էր իր քաղաքական նպատակներին: Անկասկած այդ բոլոր փաստերից չի կարելի եղը-

րտկացնել, թէ կրօնական մոլեսանդութիւնն անկախ դեր խաղալ չի կարող. ընդհակառակը դրանք շեշտում են մոլեսանդութեան նշանակութիւնը, հաստատելով նրան այսպէս ասած՝ անտեսական անհրաժեշտութեան դրաշմով...

Ցայտնի է, որ բոլոր նախական բարբարոս աղքերի հասարակական մանահետական փակ կեանքում շատ մեծ գեր է խաղում կրօնը: Այդ միենայնը նկատուում է և Թիւրքիայում: Կրօնն է թիւրքը ժողովրդի մտածութեան շարժիք, կրօնն է նրա ընտանիկան կեանքի դեկավարը... Կրօնը պատմական ողի է ներշնչում թիւրքին: Խնչպէս յայտնի է, հէնց գրավրայ էր հիմնուած Թիւրքիայի հոգութիւնը նրա տիրապետութեան առաջին գարերուեց: Բիլանդիխան և Խակիանեան թերակղու միւս պետութիւնները հաւում էին եղել ներքին գասակարգային կալեց, և ահա հէնց այդ ժամանակ խաղացին թիւրքին իրըն մի կազմակերպուած, կարգաւորուած օրդա—հըսուաբանակ:

Ըփուելով երկրագործ քրիստոնեայ ազգաբնակութեան հետ՝ թիւրքիւրսուուրեցին թէ երկրագործութիւնն և թէ արենսաներ, բայց հպատակների այդպիսի աղքեցութիւնն իրանց տիրապետունների վրայ շատ չնշն էր: Հոյի մշակութիւնը թէ առաջ և թէ այժմ զրյալաւորէս քրիստոնեաների բաժինն է կազմում: Այդ երկայթի բացատրութիւնը գտնելու համար պէտք է աշքի առաջ ունենալ Թիւրքիայի ամբողջ արևատեսական պատմութիւնը և աշխատանքի այն համանումը, որով բացառապէս թիւրքերի պարտականութիւնն էր և այժմ մի պետութեան պաշտպանութիւնը, իսկ քրիստոնեաների պարտականութիւնն է հարկեր վճարելը...

Հհա դրանք են այն հիմնական պատճառները, որոնք առանց արտաքին աղքեցութեան նպաստել են Թիւրքիայի անկախները: Քանի որ գոյութիւն ունին այդ պատճառները, միշտ ապարգին կը մնան Թիւրքիայի ջանքերը իր ներքին կազմը բարեկարգելու համար,

եթէ նոյն իսկ անկեղծ լինեն այդ ջանքը, չարկաւոր են զեռ երկար, երկար տարիներ, մինչև որ թիւքը ժողովրդի աշխարհահայեցառութիւնը մի այսպիսի փոփոխութեան ենթարկուի, որը կը կարողանայ նրան կուտուրական գործօն դարձնել, թայց դժուար թէ պատմութիւնը մի այդպիսի փորձի ենթակայ լինի, որովհետև քրիստոնեաները արդէն ներկայում կամքած են այն աստիճանի վրայ, որին համելու են թիւքերը անողու ժամանակց յետոյ:

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ չը նայեալ շրջապատող աննպաստ պայմաններին, Թիւքիայի քրիստոնեայ ազգաբնակութիւնը համեմատաբար աւելի մեծ չափով է անում, քան թէ թիւքերը: Այսպէս օրինակ բուզարական վիճակադրական աեղեկութիւնների համեմատա ծնունդների թիւը համում է հազարին—23,5 մահմեդականների վերաբերմամբ և հազարին—41,7 քրիստոնեաների վերաբերմամբ: Մահացութիւնը թիւքերից հազարին—12,7, իսկ քրիստոնեաներից—20,3. ուրիշն ընական աճումն հազար մահմեդականներին—8,8, հազար քըրիստոնեաններին—21,4 \*). դրա պատճառները բազմաթիւ են: Թիւքերը զինուորներ են, իսկ քրիստոնեանները—երկագործներ: Թիւքերը քատալիստներ են, որ իւրաքանչիւր հիւանդութեան դեղ ու դարմանը Ալլահից են սպասում, իսկ քրիստոնեանները համեմատաբար աւելի հոգատար և բանիմաց են...

Օյսէս, թէ այնպէս՝ տիրապետող ցեղը նուազում է, իսկ հպատակ ցեղը աճում, զարգանում և այն ոչ միայն քանակութեամբ, այլ և տնտեսական, կուլտուրական ոյժով: Թիւքերը տալիս են աստիճանաւորներ ու զինուորներ, իսկ քրիստոնեանները—զամատականներ, արդիւնագործողներ: Այդպիսով քրիստոնեանների մէջ առաջ է գա-

լիս ձգտում դէպի քաղաքական ազատութիւնների լինութիւն...

Քիստոնեայ ազգութիւնների կրութիւնը դէմ մի կորի է, որի մասնակիցներն են մի կողմից վաճառականներ, արդիւնագործողներ և երկրագործներ, իսկ միւս կողմից՝ աստիճանաւորները և զինուորներ...

Այդ ընդհանուր ակնարկից յետոյ պ. հնուարով անցնում է մասնակի դէպքերի ու մանրամասնութիւնների և մի շարք փաստեր վերցնելով զլխաւրապէս Մակեդոնիայի կեանքից, Թիւքիայի անցեալից ու ներկայից, ընդդուժում է թիւքը կտավալութեան ֆինանսական անտառնելի վիճակը, միլիոնարիզմի ճնշող ծանրութիւնը, երկրագործութեան ու արդիւնագործութեան յետանացութիւնը, իշխանաւորների սահմանադրակութիւնն ու կաշառակերութիւնը, հպատակների կեանքի ու դուքի անապահովութիւնը և բարենորոգումների ապարդիմ հետևանքները: Մի մայլ պատկեր է ներկայացնում պերճախօս փաստերի այդ երկար շլթան—մի պատկեր, որ կարծես լուելեայն առում է ամենքիս.

—չիւանդ է Թիւքիան, անրուժելի հիւանդ: Բարենորոգումներն անզօր են նրան բժշկերու համար: Ելքոպայի հովանաւորութիւնն անկարող է նրան երկարամ կեանք ներշնչել...

**«Русское Богоатство», ապրիլ—«Ն. Միխայլովսկին Մակուսի Դորկիի մասին».—Դժուար է ցոյց տալ մի ուրիշ հեղինակ, որ միայն մի քանի ատքիների ընթացքում այդպիսի մեծ հոչակ ստացած լինի, ինչպէս Գորկին: Նա օրուայ հերոս է թէ արևելքում և թէ արևմտաքում: Նրա գրիշը հիպոնել է միլիոնաւոր ընթերցողների: Եւ ահա այդ ուշագրաւ երևոյթը առիթ է տալիս ականաւոր քննադատների իրանց կարծիքն արտայատելու, երևոյթի պատճառները բնորոշելու: Այդ կողմից շափականց հետաքրքիր է տաղանդաւոր հրապարակախօս ն. Միխայլովսկու**

\*). В. Кінчевъ, „Македония“, 1900 стр. 56—57.

կարծիքը «Рус. Бого.» ամսագրի վերջին համարում:

Խօսելով Մ. Գորկիի վեղջին աշխատութեան՝ «На дне» դրամայի մասին, նա ի միջի այլոց ասում է.

—«Ոչ մի կասկած չը կայ, որ Գորկին ունի գեղարուեստական մեծ շընորհ: Դա մի ինքնուրոյն և ուժեղ տաղանդ է, որը իր առանձին կայծերը ցոյց է տալիս նոյն իսկ թոյլ գրուածքների մէջ: Բայց գեղարուեստական տեսլէտից անթերի երկեր շատ քիչ ունի նա, և հետաքրքին այն է, որ գրանք—օրինակ՝ «Ярмарка въ Голтвѣ», «Скуки ради»—ամենից քիչ են գրաւում ընթերցողների ուշադրութիւնը: Գորկիի գրաւածքների մեծ մասում նրա գեղարուեստական խոչըն շընորհը մի տեսակ լուելուած է կադմում մի ինչ որ բանի: Եւ երեխն—օրինակ՝ «Читатель»-ում—այդ լուելուածը համարում է ամենափերջին ունիութիւնը: Իսկապէս «Читатель»-ը իր էլութեամբ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հրապարակախօսական լուսաւոր յօդուած գրականութեան պարտականութեան մասին,—մի յօդուած՝ զրուած բիլետիստիկական բարձկ՝ բարձկ շըջանակի մէջ, որը թերես բոլորին հարկաւոր չէր. Փոխարեւական անծանօթի մարդերը նեղինակը կարող էր նոյն ձևով առել իրանից, առանց վնասելու գործին, մանաւանդ որ իսկապէս իր սեփական գործերն են դրանք: Վաղուց արգէն նկատուած է, որ Գորկիի պատմուածքների (և դրամաների) գործող անձինքը համեմատարար աւելի շատ խօսում են, քան թէ գործում: Նոյն իսկ նրա ամենամեծ գրուածքների մէջ, ինչպիսիք են՝ «Θόմα Γορδեάνε» և «Тroe», սրտեղ շափականց ուժեղ գործողութիւն, նոյն իսկ սպանութիւն կայ, այնուամենալին խօսակցութիւնները աւելի մեծ տեղ են բռնում: Դրա պատճառն այն է, որ Գորկին թէն ունի անկասկածելի գեղարուեստական շընորհ, բայց նա իր տօնմակերամներով աւելի ամենամեծ գրապարական է, քան թէ գեղարուեստագէտ...

Հրապարակախօսական եռանդուն տեմպերամենատի և գեղարուեստական արտասովոր չնորհքի շաղկապումից կարելի էր ստանալ շափականց բարեյանող հետանքներ թէ վիպագրութեան մէջ և թէ հրապարակախօսութեան մէջ, բայց դրան խանդարում է տաղանդաւոր նեղինակի մտածողութեան պակասորդները: Նախ և առաջ պէտք է ասել, որ նա շատ քիչ է նանաչում կեանքը նրան լաւ յայտնի է միայն մի որոշ շըջանի մարդկանց կենցաղը, որ և շահուանակ շահագործում է իր գըրուածքներում: Որքան էլ որ հետաքրքիր լինի, որքան էլ որ նշանակութիւն ունենայ այդ շըջանի կենցաղը, այնուամենայնի նա կեսնքի միայն մի անկիմն է կազմում և ոչ ամբողջութիւնը: Փա ինքն ըստ ինքեան շարիք չէ. այդ աշխարհից վերցրած պատկերներն ու տեսարանները առանձին, կեանքի միւս կոլմերից անկախ վերցրած էլ պահպանում են իրանց նշանակութիւնն ու նշանակութիւնը: Բայց Գորկին իր փորձերից ու գիտողութիւններից զուրս է բերել տեսական որոշ լուսաբանութիւն ամբողջ կեանքի մասին, որ և այդպիսով ստացել է միակողմանի ձայն: Իսկ ամենալլաւորն այն է, որ նա ինքն էլ չի կարողանում այդ տեսական լուսաբանութիւնից մի որոշ եզրակցութիւն դուրս բերել...

«Գեղեցիկ խօսքեր»—ահա Գորկիի հարստութիւնը: Թէ իր սեփական և թէ ուրիշների մտքերը նա արտայատում է սրամիտ, գեղեցիկ ու պայծառ ափորիզների, համեմատութիւնների, հակիրճ տուակների և ասացուածքների ձևով: Նա այնքան հարստա է այդպիսի փայլուն ձեւերով, որ անսահման շըռայլութեամբ գովծ է ածում բոլոր հերոսների վերաբերմամբ առանց իրան հաշիւ տալու, թէ այդ ձեւերը նըրքան տեղին, նըրքան համապատասխան են սրա կամ նրա համար: Եւ ահա փայլուն ու գեղեցիկ ձեից, սրամիտ արտայատութիւնից շլացած ընթերցողը շատ անգամ չի կարողանում ու-

ըոշել, թէ ուժմ է պատկանում այս կամ  
այն միտքը—հեղինակի՞ն, թէ նրա հե-  
րոսին: Դեռ աւելին կ'ասեմ.—ինքը հե-  
ղինակն էլ երբեմն չի կարողանում լու-  
ծել այդ հարցը: Նրան զրադեցնում,  
անհանգստացնում է մի յայտնի խըն-  
դիր. նա վերջի վերջոյ զալիս է մի  
որոշ եզրակացութեան և այդ եզրակա-  
կացութիւնը ինքնատիպ և զեղեցիկ  
ձևով արտայայտում է կամ իր անոնից  
կամ իր հերոսներից մէկի բերանով:  
Թայց յանկարծ նրա միտքն է ընկնում  
մի ուրիշ զեղեցիկ արտայայտութիւն,  
մի ուրիշ «զեղեցիկ խօսք»—բոլորովին  
հակառակ իմաստով, և նա դրանից  
շլացած՝ նորից սկսում է տատանուել:

Դրանից յետոյ յարգելի քննադա-  
տը վերլուծում է «Հա ձա՞» պիէսը,  
համեմատում է նրան Դորկիի նախկին  
վրուածքների հետ, գտնում է նրանց  
մէջ շատ մեծ կապ, այդ համեմատու-  
թեան ընթացքում մատանիշ է ա-  
նում պիէսի պակտուար կողմերը և  
վերջը դուրս է բերում այն եզրակա-  
ցութիւնը, որ Դորկին ըստ երկոյթին  
հրաժարում է այն մտքից, թէ «ինչ  
որ ուժեղ է, լաւ է, թէ բռնեակները  
զոպենհառւէրից լաւ փիլիսոփայութիւն  
կարող են անել: նա վերաքննութեան  
է եծթարկել իր մտքերը, և այդ վերա-  
քըննութիւնը դեռ վերջացած չէ...»